# ՄԵՍՐՈՎԲ

# ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

ԵՒ

## ՆՈՐԱ ՄԷԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ.

Այս դարուս ճշմարտապէս ազգասէր, հեռատես եւ եռանդուն Հայերէն մէկն եղած է հանգուցեալ Պ. Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց, որոյ գրաւոր աշխատութիւնները որչափ եւ պակասաւոր երեւին ըստ ոճոյն եւ ըստ ընտրութեան նիւթոց, պէտք է միշտ յարգ ունենան ազգայնոց առջեւ՝ իբրեւ հայրենասէր արդիւնաւոր անձի գըրուածքներ: Նորա ճանապարհորդութիւնը, քանի մը մանր շարադրութիւնները, եւ մանաւանդ Կալկաթայի մէջ քանի մը տարի հրատարակած Ազգասէր անունով օրագիրը, ըստ բաւականին կցուցընեն թէ նա բնական հանճարով, տաք սրտով, զուարճախօս լեզուով, եւ որ մեծն է՝ ազգասիրական հոգւով լի մարդ մը եղած է, ուստի եւ արժան է որ նորա յիշատակը անմոռաց մնայ ազգիս մէջ:

Բաժններուս իբրեւ ապացոյց եւ հաստատութիւն կհրատարակեմք այս տեղ նորա մէկ տպագիր առաջարկութիւնը զոր ըրած է իհեռուստ, այսինքն Կալկաթայէն, իւր քաղաքակից Երեւանցւոց ասկից գրեթէ 35 տարի առաջ: Ձեմք գիտեր թէ այս եռանդուն նամակը ինչ ազդեցութիւն ըրեր է այն ժամանակի Երեւանցի իշխանաւորաց եւ եկեղեցականաց վրայ, կամ թէ ում կողմանէ եւ ինչ արգելքներ ունեցեր է որ ի գործ չէ դրուած՝ ոչ այն ժամանակները եւ ոչ մինչեւ ցայժմ: Այս միայն յայտնի է մեզ որ Թաղիադեանցին քաղաքական վարժատան համար առաջարկած տեղւոյն վրայ է այժմ նորաշէն Առաջնորդարանը՝ հանդերձ ընդարձակ գաւիթով եւ պայծառ ու գեղեցիկ վարժատունով: Առաջնորդարանը բարձրադիր լինելով՝ առողջարար օդ ունի, եւ Զանկու կամ Հրազդան գետին վրայ կնայի, որոյ սաստկաշառաչ խոխոջանքը մեծապէս զուարճալի կընեն այն տեղւոյն բնակութիւնը. — Մեր այն տեղը պատահած տարին, այսինքն 1859-ին, Երեւանայ Յաջորդ Գերապատիւ Ստեփանոս Վարդապետը (այժմ Արքեպիսկոպոս), որ այն գեղեցկաշէն առաջնորդարանին ու վարժատանը հիմնադիրն ու վերատեսուչն էր, ամենայն ջանք եւ ակընկալութիւն ունէր որ հետ զհետէ ծաղկի եւ յառաջանայ այն վարժատունը: Այժմ չեմք գիտեր թէ որքան յաջողութիւն գտան այն բարեսէր եւ ազգասէր պատուական Անձին դիտաւորութիւնները, բայց եւ տարակոյս չունիմք որ Երեւանայ թէ եկեղեցական եւ թէ աշխարհական իշխանաւորները ամենեւին անհոգութիւն չեն ըներ՝ նորա պէտք եղած օգնականութիւնն ու ձեռնտուութիւնն ընելու. որով եւ բարեյիշատակ Թաղիադեանցին փափաքը ըստ իմիք կատարած կըլլինին: Ահաւասիկ նորա նամակը, որոյ միայն քանի մը տեղերը պարզաբանելու համար ծանօթութիւններ կաւելցընեմք մեր կողմանէ:

«Աստուածասէր եւ Ազգասէր Հասարակութեանն Հայոց՝ Փրկեալ Քաղաքին Երեւանայ. Սրբակրօն Քահանայից, Բարեծնունդ Իշխանաց եւ համաձայն բարեպաշտօն Ժողովրդոց,

«Որդիապարտ Սիրոյ Նուէր,

«Աչքըներդ հազար լոյս որ մեր քաղցր Աշխարհքն Պարսից դառն չարչարանքիցն ազատվեց, Քրիստոնի Տէրութեան ներքոյ ընկաւ: Փառք բարերարին Աստուծոյ, որ այսուհետեւ աւել նեղութիւն չէք ունենալէց, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անուանիք, ձեր ազգասիրութեան՝ իմաստասիրութեան լուրն, եւ արուեստից յառաջադիմութիւնն բոլոր աշխարհ պիտի տարածվին:

«Իմ լաւ Քաղաքացիք, էսպէս երջանիկ բախտի որ դուք էք պատահել, կարծեմ որ

մեր Նախնիքն եւս Արշակունի Թագաւորութեան ժամանակումն էլ չէին պատահել. գերա՛ թէպէտեւ Թագաւորութիւնն իւրեանցըն էր, սակայն բարբարոսութիւն եւ զուլումըն պակաս չէր: Ուրեմն աղաչեմ, նախ՝ աղօթս առնէք որ Աստուած Ամենողորմած ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Աթոռն միշտ հաստատ պահի, սուրն կտրուկ, եւ ամէն թշնամեաց վերայ յաղթող: Ապա՝ աղաչեցէք, որ նոյն Աստուածն մեր ազգին սէր միաբանութիւն տայ, երկար կեանք եւ բարի յաջողութիւն, որ կարենան ճանաչել թէ ինչ է լաւն՝ եւ հետեւիլ նմին:

«Մնաց որ, ես ծառայս ձեր թիվն 1823 ումն, Սրբազնակատար Կաթուղիկոսի հրամանաւն Հաղպատիցն ելայ, շատ չարչարանքով հասի Հնդստան, մին տարի պարապ գէս ու գէն ընկայ, երկրորդ տարումն Կալկաթու Հայոց վարժարանումն վարպետութիւն արի, յետոյ Սուրբ Երուսաղեմի Նուիրակ Աբրահամ վարդապետի շնորհովն ծանօթացայ Ինգլիզի Եպիսկոպոսին, որոյ անունն էր Ռիջինալդ Հիբր. մին խիստ լաւ եւ ողորմած Կարդաւոր. որ իւր խարճովն տվեց ինձ իւրեանց մեծ վարժատունն. եւ ես ներկայ Աստուծոյ ողորմութեամբն սովորումեմ Լատինի, Ինգլիզի, Յունաց եւ Պարսից լեզուն, եւ այլ զանազան արհեստանի: Վերջապէս՝ երբ որ լսեցի ներկայ մեր Աշխարհի ազատութիւնն, սիրտս ուրախութեամբ վառվեց, Ցրանկ ազգաց լուսաւորութիւնն տեսնելով եւ մեր ազգի անլուսաւորութիւնն, նախանձ մեծ ընկաւ հոգիս, եւ թէպէտ ես ոչ շատ փողատէր վարդապետ եմ (1) ոչ վաճառական, ոչ կարգ ունիմ ոչ աստիճան, սակայն Աստուած՝ որ միշտ տկարաց ձեռքովն մեծ մեծ բաներ այ կարող կատարել, փառահացնում այ ինձ՝ իմ կարեաց գեօրայ իմ Ազգիս, իմ քաղաքիս եւ իմ ծնող Աշխարհիս պիտանի լինիմ ձեր շնորհքովն: Բայց այս իմ պիտանութիւնս ուրիշ կերպով չէ լինելէց, եթէ ոչ՝ վարժատուն հաստատէք եւ մեր երեխայից միտքն լուսաւորէք:

«Ես մին խնդիր գրեցի Վրաստանու Ներսէս Արքեպիսկոպոսին թէ՝ որովհետեւ Զորագեղի մօտի Անապատն քաղաքի մէջ տեղն լինելով, այսինքն Շհարի, Կոնդի եւ Զորագեղի միջումն (2), հեշտ կլինի մանկանց համար յամէն տեղաց հաւաքվիլ անդ վասն կարդալու. եւ որովհետեւ Բերդին Բազարին ու Գեարին մօտ այ, շատ յարմար եմ համարում որ տեղն մին քաղաքական վարժատուն հաստատվի մեր Ազգի լուսաւորութեան համար, եւ Երեւանայ Առաջնորդի աթոռն փոխվի տանվի Կոզեռի մօտի Ս. Զինուոր եկեղեցին: Նաեւ գրել եմ, որ եթէ Սրբազանն հաճենայ շնորհել մեզ էն տեղն, ուրեմն գրի ինձ, որ ես տեղիցս զանազան Ազգի կարդալու գրքեր եւ տպարան, որքան իմ աղքատ զօրութիւն կխոստանայ, բերեմ եւ գամ անձամբ աշխատեմ վասն ձեր որդւոց եւ իմ եղբարց լուսաւորութեանն:

«Արդ՝ իմ Ազնիւ Քաղաքացիք, խնդրեմ որ գիրս ձեզ հասնելէն իբաց շնորհ առնէք Շըհարցիքդ, Կոնդեցիքդ, Կարբեցիքդ (3) եւ Զորագեղցիքդ հաւաքվիլ նոյն անապատումն, յառաջ Ս. Քահանայիցն խնդրիլ որ աղօթք առնեն առ Աստուած վասն բարի յաջողութեան գործոյն. ապա՝ իմ էս աղքատ գրութիւնս կարդացէք խորհեցէք, եթէ ձեզ ընդունելի լինի իմ առաջադրութիւնս, ուրեմն միաբանութեամբ երկու արզի (4) գրեցէք. մինն Սրբազնակատար Կաթուղիկոսին՝ եւ միւսն Սրբազան Ներսէս Արքեպիսկոպոսին Վրաստանու: Եւ խնդրեցէք որ էդ տեղն Ազգին ընծայ շնորհեն ձեռագրով մոհրով եւ ղապալայով (5): Եւ երբ Աստուած կատարի ձեր խնդիրքն իբարին, շուտ ինձ մին գիր գրեցէք. եւ ".".". Կաթուղիկոսի եւ Ներսէս Առաջնորդի թղթերի օրինակքն նորանում փակեցէք, ուղարկեցէք Թաւրեզու Ինգլիզի դեսպան Մէկդոնալդ Հազարապետի ձեռքն, նա շուտով Կալկաթա կհասցընի: Երբ ես ձեր գիրն գտնեմ, կգամ Աստուծով, եւ էնպէս կգամ որ ուրախանաք:

«Իմ Ազնիւ քաղաքացիք. գիտեմ որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերութեան տակ մնալն գիտութեան յարգն ոչ կարէ ներկայ լաւապէս ցուցանել ձեզ, բայց յուսամ որ շուտով կարողանէք ճանաչել: Գիտութիւնն՝ էն ազնիւ Թագուհին այ, որ հախս (6) աղքատ հագուստով բախտաւորաց գռանն կդեգերի, ամմա՝ Թագաւորաց

(1) Արդեօք նորա ժամանակները շատ փողատէր վարդապետներ կային թէ հեգնօրէն է ըսածը, մեզ յայտնի չէ:

(2) Զորագեղ կըսուի Երեւան քաղաքին արուարձանի նման դարձած մեծ գեղը, որ Հրազդան (Զանկու) գետին անցած խորաձորոյն երկու կողմը շինուած է: — Անապատ ըսածը Երեւանայ վանքն է, հանդերձ մայր եկեղեցեաւ. այն Անապատին տեղն է այժմու նորաշէն Առաջնորդարանն ու վարժատունը՝ եկեղեցւոյն գաւթին մէջ: — Շհար (չէհիր) կըսուի Երեւանայ բերդէն մինչեւ քաղաքին մէջ տեղերը, ուր են այժմու Կուսակալին պալատը, մեծ հրապարակը, հին եւ նոր շուկաները, վաճառանոցը, եւ այլն: — Իսկ Կոնդը Երեւանու բարձրադիր եւ ընդարձակ մէկ թաղն է:

(3) Կարբեցիք կըսուին Երեւանու Կարբի արուարձանին կամ թաղին բնակիչները:

(4) Աղերսագիր, արզուհալ:

(5) Այսինքն կնքով եւ պայմանագրով:

(6) Արդարեւ, յիրաւի. հագգա:

թագին պարծանք ու փառք այ: Տէրութիւն չկայ որ էս անուէր (1) գիտութեամբս կանգնած եւ պահվում չըլինի. Ռուսաց էգ մեծ Կայսերութիւնն, թէ յառաջ քան զՍուրբն (2) Պետրոս իւրեանց իմաստասէր թագաւորն ինչ էր, եւ ներկայ ինչ այ, յայտ է ձեզ: Մին երեխայ եթէ կարդալ գրել գիտենայ, էն արուեստանին որ բաղում չարչարանքով վեց կամ եօթն տարումն այ սովրում, մին երկու տարումն կարէ հեշտ ու հանգիստ սովրած արուեստն հնարքով հեշտացնիլ, եւ նոր նոր արուեստանի եւս հնարել:

«Իրաւի արուեստից անունն յիշելով այնքան եմ ամաչում որ կարող չեմ ասելս. զերա, մեր խեղճ աշխարհքն ինչ մին լաւ արուեստ ունի. ոչ ինչ: Էն արուեստանին որ չորս հազար տարով յառաջ աշխարհումն կային, ներկայ էլ էնտանք են մեր Հայաստանու արուեստանին. եւ ինչպէս կոպիտ սովրումեն, էնպէս էլ կոպիտ սովրցնելով գնումեն: Արուեստ պայծառացնիլ չեն գիտում, նոր արուեստ գտնիլ չեն կարում. եթէ լըսումեն որ մին աղջիկ գրել կարդալ այ սովրում, զարմանումեն. երբ Ինգլիզ կամ Փռանկ են տեսնում, կարծումեն աստուած է յերկնից իջել ոտներն ամպաթաթախ (3): Եւ ինչ է պատճառն աղաչեմ, եթէ ոչ գիտութիւնից զուրկ մնալն: Կարծեմ ինձ վերայ կծիծաղիք եթէ ասեմ, որ Ինգլիզի եւ Փռանկի կնանիք եւ դստերքն վեց եօթն լեզուի կարդալ գրիլ գիտեն. մեծ մեծ գրքեր են շարադրում, տպում, ասղարարութիւն, ձեւ, կար, վաճառականութիւն, լաւ սազ ածել, պար գալ, եւ այլն: Բայց յուսամ երբ որ Ազնուութեան հոգին կնորոգվի ձեր միջումն, եւ դառն գերութեան քաշութիւնն կմոռանաք, էն վախտն կիմանաք թէ ինչ է իմ լացս: Ախ, իմ լաւ Քաղաքացիք, ախ, հոգիս հարայ այ կանչում (4), հին խմորն թողէք. նոր Ազգի լուսաւորութեան եւ պայծառութեան հետեւեցէք:

«Ամօթ չի ձեր իշխանազուն որդւոց համար դատարկ քուչէքումն ման գալ, կամ մինակ անտաշ դարբնութիւն, խառատութիւն, կաշէպանութիւն, եւ թթի ղուշ քըշել (5) սովրիլ: Ամօթ չի ձեր խաթուն դստերաց համար մինակ տուն սրբիլ սովրիլ. եւ մին գնձոտ մինթանայ ձեւելու համար ղատաքը կռնատակին դռնէ դուռ ընկնիլ (6): Ո՞ւր է ձեր վեհ հոգին, ո՛ւր է ձեր աշխարհի ծանօթացած անունն. կորեա՞ն արդեօք. ոչ: Աստուծոյ յատուկ ողորմութիւնն բացվել է ձեզ վերայ իմ ազնիւ Քաղաքացիք. մի ասէք թէ ջանք անենք, փող ժողվենք լաւ ապրենք. մոխիր է մեր փողն, փուչ է մեր կեանքն, անօտի է մեր յոյսն, եթէ չենք ջանալէց որ մեր Ազգի երախայից էն լուսաւորութեան դուռն բանալ, որ վաղն եւ միւս օրն կարողանան մարդի միջում մարդ երեւիլ:

«Պա՛րտ է ուրեմն Աստուծոյ ողորմութիւնըն տանատակ չտալ, նորա ձեզ տուած ազատութիւնն անմահ փրկութիւն համարել. ջանալ որ ձեր խանզատայ (7) որդիքն կարողանան իմաստութեամբ թո՛ւր բռնել ընդդէմ թշնամեաց Աստուծոյ եւ բարերար կայսեր ձերոյ. եւ ձեր աղջկերքն՝ գրիչ. նոքա քաջութիւն առնեն, եւ սոքա նորանց քաջութիւնն գրեն. նոքա դառնան քաջ զօրք եւ զօրականք, եւ սոքա քաջ իմաստուն եւ լաւ Տանտիկնայք. եւ թէ կարենայ մեր աշխարհն մին անգամ իւր որդիք եւ դստերքն էսպէս կատարելութեամբ ծաղկած տեսանել, չգիտեմ ո՞ր մին Փռանկի աշխարհից պակաս կմնայ, թէ լուսաւորութեամբ, թէ արուեստով, թէ ազնուութեամբ, եւ թէ երջանկութեամբ. եւ ոչ թէ մինից: Ահա էս այ իմ ցանկութիւնս իմ քաղցր Աշխարհիս համար, եթէ որ հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ եւ կատարել, ուրեմն հեշտ է, մենք հիմն կդնենք եւ Աստուած կշինի. եւ ես ուրախ կլինիմ ապրիլ ձեզ համար՝ եւ մեռնիլ ձեզ համար: Ապա թէ ոչ՝ էլ ուրիշ չեմ ու չունի պատճառ չունէք, եւ եթէ ղանց կառնէք գլխից բռադ անելու համար (8), առաջի ահեղ Ատենին Քրիստոսի պարտականըն դուք էք, եւ դուք պիտիր լինէք. Ողջ լերուք: Մնամ

«Ազնուութեան Ձերոյ
«Խոնարհ Ծառայ

«ՄԵՍՐՈՎԲ ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ.

«Իկալկաթա. Նոյեմբերի 1, 1828.
Ինգլիզի Եպիսկոպոսի ճեմարանում:»

Այս ստորագրութիւնը նոյն իսկ հեղինակին ձեռագիրն է, ինչպէս յայտնի է մեզ նաեւ իւր թղթակցութենէն զոր ունեցեր է ատենով մեզի հետ:

(1) Հեզնօրէն տրուած ածական:

(2) Հասկըցիր Մեծն:

(3) Ցաւալի ճշմարտութիւն լաւ բացատրուած:

(4) Կաղաղակէ, կճառաչէ:

(5) Ճնճղուկ:

(6) Մէկ կնծոտ միրթան (բաճկոն) ձեւելու համար՝ զաւակները բեւին տակն առած դռնէ դուռ ընկնիլ:

(7) Խանի որդիք, իշխանազունք:

(8) Գլխացաւէ ազատ մնալու համար: